ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/48

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ

«Արպանիվ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Ա. Հակոբյանի (լիազորագիր՝ տրված 11.05.2020թ.),

քննելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից 11.05.2020թ. ներկայացված (12.05.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/48 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Արպանիվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արպանիվ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.05.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ 27.04.2020թ. կայացել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար ավտոմեքենաների անիվների գնման

գործընթացի «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը:

Վերոհիշյալ գնման գործընթացի 1-ին չափաբաժնի համար հայտ են ներկայացրել «Արպանիվ» ՍՊԸ-ն և «Հույս-Սեդան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 27.04.2020թ. թիվ 2 արձանագրության 7.2-րդ կետի համաձայն՝ «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 2՝ Գնային առաջարկում, չափաբաժնի անվանումը չի համապատասխանել հրավերով սահմանված գնման առարկայի անվանմանը, ինչը շտկման ենթակա չէ:

Վերոհիշյալ հիմքով Ընկերության հայտը մերժվել է /արձանագրության 11.2 կետ/, իսկ «Հույս-Սեդան» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակի:

Ընկերությունը նշել է, որ «Արպանիվ» ՍՊԸ-ի գնառաջարկը ավելի ցածր է եղել, քան «Հույս-Սեդան» ՍՊԸ-ի գնառաջարկը, բայց քանի որ Ընկերության հայտը մերժվել է, ուստի 07.05.2020թ.-ին տեղեկագրում՝ gnumner.am կայքում, հրապարակվել է հայտարարություն՝ «Հույս-Սեդան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին՝ անգործության ժամկետ սահմանելով մինչև հինգ օրացույցային օր, որը լրանում է 12.05.2020թ.:

Ընկերությունը վկայակոչել է նաև այն հանգամանքը, որ փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընկերության կողմից Հավելված 2 /գնային առաջարկ/ ապրանքի անվանում դաշտում լրացվել է Անվադող 215/60R16, իսկ հրավերում նույն դաշտում գրված է ավտոմեքենայի անիվներ 1, սակայն նույն չափաբաժնի տեխնիկական բնութագիր դաշտում գրված է անվադող 215/60R16, ինչը որ Ընկերության կողմից լրացվել է ապրանքի անվանում դաշտում, այսինքն՝ Ընկերությունը գրել է ապրանքի ավելի կոնկրետ անվանումը, որը որ համընկնում է տվյալ չափաբաժնի հետ և Հավելված 1.1-ով ևս համընկնում է և վերջապես ապրանքի անվանումը ավտոմեքենաների անիվներ 1-ը չէ, այլ կոնկրետ՝ Անվադող և կոնկրետ՝ չափատեսակը 215/60R16:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով

իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Համադրելով գնային առաջարկում նշված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը՝ Ընկերությունը գտել է, որ թույլ չի տվել հրավերի պահանջների խախտում, և հանձնաժողովն անհիմն կերպով մերժել է «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Դադարեցնել 27.04.2020թ. «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հարցման գնահատման հանձնաժողովի N 2 արձանագրությամբ «Հույս-Սեդան» ՍՊԸ -ին որպես ընտրված մասնակից ճանաչելու որոշումը,

2. Պարտավորեցնել ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61 ծածկագրով գնանշման հարցման գնահատման հանձնաժողովին՝ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արպանիվ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 14.05.2020թ. գրությամբ հայտնել է, որ «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է, քանի որ հայտի Հավելված 2՝ Գնային առաջարկում որպես 1-ին չափաբաժին ներկայացված գնման առարկայի անվանումը (Անվադող 215/60 R16) չի համապատասխանել հրավերով սահմանված 1-ին կամ 2-րդ չափաբաժիններով նախատեսված որևէ գնման առարկայի անվանմանը (ավտոմեքենաների անիվներ-1, ավտոմեքենաների անիվներ-2), որոնք սահմանված են նաև նախարարության 2020թ գնումների անվանացանկով ըստ գնումների միասնական անվանացանկում առկա CPV կոդերի, որտեղ բացակայում է «Անվադող 215/60 R16» անվանմամբ գնման առարկա: Ընդ որում՝ «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից որպես գնման առարկայի անվանում ներկայացվածը

գնման առարկան բնութագրող բաղադրիչ է և հանդիսանում է հրավերով պահանջված գնման առարկայի տեխնիկական բնութագրի նկարագրության մաս: Ինչ վերաբերում է մասնակցի ներկայացրած դիմում-բողոքում նշված պնդմանը, որ բավարար է ներկայացնել «Անվադող 215/60 R16» անվանումը և վաճառողի կողմից կտրամադրվի պահանջվածը, ապա այն բավարար չէ, քանի որ հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների տեխնիկական բնութագրերում անվադողի չափսը նույնն է և դրանք տարբերվում են օգտագործման նպատակով («ամառային» կամ «համասեզոնային») և այլ տեխնիկական չափանիշներով:

Պատվիրատուն հայտնել է, որ գնման ընթացակարգի մասնակիցների հայտերը գնահատելիս գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով, համաձայն որի հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ Կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Տվյալ դեպքում մասնակցի հայտը մերժվել է գնային առաջարկը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, որի նկատմամբ կիրառելի չեն Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերը, երբ մասնակցի գնային առաջարկը ենթակա չէ մերժման:

Պատվիրատուն նշել է նաև, որ կարգով սահմանված վերոնշյալ կարգավորումները ամրագրված են նաև «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 և 8.2 կետերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արպանիվ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 04.05.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 2՝ Գնային առաջարկում չափաբաժնի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված գնման առարկայի անվանմանը, ինչը շտկման ենթակա չէ:

3. «Արպանիվ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 2՝ Գնային առաջարկում 1-ին չափաբաժնի համար, որպես ապրանքի անվանում, նշել է «Անվադող 215/60 R16»:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով, և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Հույս սեդան» ՍՊԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արպանիվ» ՍՊԸ-ի՝ 11.05.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 14.05.2020թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, ինչպես նաև «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպես՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերով նախատեսվել է հետևյալը.

Չափաբաժ ինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	ավտոմեքենաների անիվներ-1

Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի մատակարարման պայմանագրի նախագծի Հավելված 1-ով 1-ին չափաբաժի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Ապրանքի հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ավտոմեքենաների անիվներ-1	Ամառային **անվադող 215/60 չափսի, R16**, մարդատար ավտոմեքենայի համար: Ռադիալ կառուցվածքով: Առանց օդախուց: Անվադողի վրա պետք է նշված լինի արտադրող երկիրը և արտադրողը: Անվադողի վրա նշագրված լինի անվադողի սահմանելի արագության ինդեքսը-Speed Index-ոչ պակաս H (210 կմ/ժ) , բեռնվածության ինդեքսը-Load Index-ոչ պակաս 99, առավելագույն բեռնվածությունը (կգ)-Max Load (կգ)-ոչ պակաս 775, անվադողի արտադրության տարեթիվը-ոչ շուտ, քան 2020 թ. 1-ին եռամսյակ:

«Արպանիվ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 2՝ Գնային առաջարկում 1-ին չափաբաժնի համար, որպես ապրանքի անվանում, նշել է «Անվադող 215/60 R16», իսկ Հավելված 1.1-ով ներկայացրել է առաջարկվող ապրանքի հետևյալ ամբողջական նկարագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ապրանքի անվանումը		Տեխնիկական բնութագիրը
1	Doublestar	DH05	Ամառային անվադող 215/60 չափսի, R16, մարդատար ավտոմեքենայի համար:Ռադիալ կառուցվածքով: Առանց օդախոց: Անվադողի վրա նշագրված է անվադողի սահմանելի արագության ինդեքսը-Speed Index-H (210 կմ/ժ), բեռնվածության ինդեքսը-Load Index-99, առավելագույն բեռնվածությունը (կգ)-Max Load (կգ)-775, անվադողի արտադրության տարեթիվը-ոչ շուտ, քան 2020թ. 1-ին եռամսյակ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 04.05.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 2՝ Գնային առաջարկում չափաբաժնի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված գնման առարկայի անվանմանը, ինչը շտկման ենթակա չէ:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով, և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Հույս սեդան» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերով նախատեսված 1-ին չափաբաժնի անվանումը, հրավերում ներառված ապրանքի մատակարարման պայմանագրի նախագծի Հավելված 1-ով 1-ին չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագիրը և համադրելով Ընկերության կողմից ներկայացված Հավելված 2-ը և Հավելված 1.1-ով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից ներկայացված 1-ին չափաբաժնի ապրանքի անվանումը տառացիորեն չի համապատասխանում հրավերով սահմանված ապրանքի անվանմանը, այնուամենայնիվ, Ընկերությունն ըստ էության առաջարկել է թիվ 1 չափաբաժնով նախատեսված նույն ապրանքը՝ ապրանքի անվանում դաշտում որպես անվանում նշելով Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով 1-ին չափաբաժնի համար սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրի նկարագրական մասում նշված «Անվադող 215/60 R16»-ը:

Բացի այդ, հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն, որպես 1-ին չափաբաժնի անվանում նշելով ավտոմեքենաների անիվներ-1, ըստ էության նկատի է ունեցել Ընկերության կողմից Գնային առաջարկի 1-ին չափաբաժնով նշված անվադողը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ վերոնշված հիմնավորումներով պայմանավորված՝ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության ներկայացրած Հավելված 2՝ Գնային առաջարկը սույն մասով պետք է գնահատի բավարար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից 11.05.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. Պարտավորեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-20/61» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

դադարեցնել թիվ 2 արձանագրությամբ 1-ին չափաբաժնի մասով «Հույս-Սեդան» ՍՊԸ-ին որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

դադարեցնել թիվ 2 արձանագրության 7.2 ենթակետով նախատեսված հիմքով «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին նույն արձանագրության 11.2 ենթակետով կայացված որոշումը:

2. Բողոքը «Արպանիվ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**